Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՄՈՎՍԵՍ ԱՐԱԶԻ

(Ծննդյան 85-ամյակի առթիվ)

Փոքրիկ, խոր ընդգրկումներ չունեցող, պատմության լայնահուն պողոտայի լուսանցքներում կանգնած, բայց իրենց ոչ հարուստ կյանքով ու գործունեությամբ պատմությունը կերտող անհատականություններն են Մովսես Արազու սկզբնական շրջանի պատմվածքների հերոսները։ Ծանր գոյավիճակը լլկել է նրանց, աղավաղել նրանց էությունը, աշխարհընկալման ամբողջ սիստեմը։ Ներքին սրված բնազդով նրանք տանջալից կերպով զգում են այս ամենը, զգում են, որ արևի կենարար շողերը խլում են մի բուռ ընտրյալները, բախտավորները միայն, իսկ իրենց վիճակվում է բեռնակրի, խալիչա գործողի, վարձու մշակի, գործազուրկի, այսինքն՝ «արյուն թքելով» հաց աշխատողի անագորույն ապագան։ «Այդպես եղել է, այդպես էլ կլինի», իրենց ասածը կազակի մտրակով, զինվորի սվինով, աքսորականի ձեռնակապերով հաստատելով՝ տիրականորեն շշնջում են նրանց ամեն կողմից։ Սակայն իրենք՝ լլկվածները, ոսկու դեզի տակ մեռնողները ինչ-որ մի ներքին ընկալմամբ կռահում են, որ այդպես եղել է, բայց այդպես չի լինելու։

Դժվար է նկատել փոքր մարդկանց, բացահայտել նրանց ներքին մեծ ողբերգությունը, և որ եռապատիկ անգամ դժվար էր՝ ցարական ամենակուլ գրաքննության պայմաններում գրել այդ մասին։ Հարկավոր էր գրողի բնատուր ձիրք, փոքրի մեջ մեծը տեսնելու և մեծը փոքրի մեջ խտացնել կարողանալու անառարկելի կարողություն, ալեգորիաների դիմելու օգնությամբ խուսանավելու հմտություն։ Եվ Արազին գեղեցիկ կերպով կարողացավ անել այդ բոլորը։ Նրա սկզբնական շրջանի գործերը («Մենավոր լապտերը», «Կիսատ տունը», «Վերջին երազը», «Հեքիաթը») ասվածի գեղեցիկ ապացույցը լինելով հանդերձ, միաժամանակ ակներևորեն ցույց տվեցին, որ հայ նոր գրականության անդաստանն է իջնում օժտված մի արձակագիր, որն իր անկապտելի տեղն է ունենալու մեր գրականության երախտավորների շարքերում։ «Արազու գույները քնքուշ են, բայց և որոշ, – նրա սկզբնական շրջանի գործերի մասին բոլշևիկյան «Պայքար» թերթում գրեց Ասքանազ Մռավյանը։ Նրա ամեն մի տողից բուրում է ազնիվ, լավատես ձգտումներով լի տրամադրություն։ Արազին պետք է մշակի և զարգացնի իր համակրելի տաղանդը։ Նա ապագա ունի»։

Պատկերելով «նկուղի մարդկանց», Արազին, սակայն, չմնաց սոսկ որպես նրանց ցավատանջ մորմոքն արձանագրողի, ընդամենը նկարագրողի պասսիվ դիրքերում: Հատկանշական է, որ «Մենավոր լապտեր» պատմվածքն ավարտվում է «Ինչ որ լավ բան կա աշխարհում՝ բոլոր մարդիկ կունենան և միմյանցից չեն խլի» բաղձանքով, իսկ «Պրոմեթևսում» շղթայված հերոսը հետևյալն է պատգամում իր հաջորդներին. «Մենք կստեղծենք մարդ-աստվածների պանծալի պանթեոնը»: Ապագայի հանդեպ այս վառ մտայնությունն էր ահա, որ ստեղծագործական հենք պիտի հանդիսանար Արազու համար իր գրական գործունեության հաջորդ՝ սովետական շրջանում:

Դարասկզբի դեպքերը, պրոլետարիատի մասսայական ելույթները, ռուսական երեք հեղափոխությունները գաղափարական բեկում առաջացրեցին Արազու ստեղծագործական կյանքում: Զգալի դեր խաղաց նաև անձնական մտերմությունը հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանի հետ: Այս բոլորի հետ նա չունեցավ տատանումների, շփոթված որոնումների, «նախ հեռվից դիտելու» այն էտապը, որ հատկանշական էր մշակույթի գործիչներից շատերի համար: Սովետական իրականության օրոք հրատարակված նրա պատմվածքների առաջին ժողովածուն կրում է «Անցվորներ» բազմանշանակալից վերնագիրը: Իրեն հատուկ դիտողականությամբ ու հոգեբանական խոր անալիզներով, Արազին պատկերում է հին մտածողությունն ու ըմբռնումներն ունեցող այն անձանց վիճակը, որոնք ստիպված են ապրել նոր՝ հեղափոխությունից հետո ընկած պայմաններում: Հոկտեմբերի նոր ու անհասկանալի իրողությունից ցնցված, նրանք աշխատում են որևէ կերպ ըմբռնել այն նոր ու դարակազմիկ տեղաշարժերը, որոնք տեղի են ունենում իրենց շուրջը, իրենց հին մտածելակերպի ցավագին ճիգերով աշխատում են որևէ ուղի կամ ելք տեսնել իրենց դեպքերի անվերծանելի շղթայում: Իսկ ելքը միակն է և Արազին առավել քան հստակությամբ մատնանշում է այն: Պատմության երկաթե տրամաբանության համաձայն «հին այամի» մարդիկ այլևս ոչինչ չունեն անելու նոր իրականության մեջ: Նրանց մնում է սոսկ մի կողմ քաշված հիանալ իրենց նախկին փառքով («Անցյալի նիրհը», «Հին ժամացույց»), կամ դժգոհ փնթփնթոցով ճանապարհ տալ իրենց ասպարեզից դուրս մղածներին («Զառափաթ»): Իսկ նոր կյանքը իր հետ բերում էր նոր մարդիկ, նոր, բարձր տիպի աշխատողներ, մարդկային միանգամայն նոր հարաբերություններ, որոնք խարսխվում էին ընկերոջն ազնվաբար օգնելու, «նախկինների» չարամիտ դավերից փրկելու, լավագույն հատկությունները խրախուսելու ու դրվատելու վեհ սկզբունքների վրա («Ընկեր Մուկուչը»): «Ընկեր Մուկուչը» հանդիսացավ Արազու

ստեղծագործության բարձրակետը, որովհետև հեղինակը կարողացավ գեղագիտորեն պատկերել հասարակ մարդու էվոլյուցիան, սկսած «Այ տղա Մուկուչ»-ից մինչև «Ընկեր Մուկուչ» դառնալը։

Գեղարվեստական լայնակտավ ստեղծագործությունների ասպարեզն էլ հասանելի դարձավ Արազու համար։ Երեսնական թվականներին հրատարակվում են «Ջրվեժի ցոլքերում» և «Լուսնի շողերով» վիպակները, որոնք իրենց մի շարք հոռի կողմերով հանդերձ, որոշ ներդրում էին մեր գրականության մեջ։ Հեղինակը պատկերել է նոր կյանքի կառուցումը մեր երկրում և դրա հետ կապված մի շարք բարդությունները՝ հին և նոր հոգեբանությունների պայքարը, հավակնոտությունը աշխատանքի մեջ, մարդկային էգոիզմը և այլն։ 1940 թվականին հրատարակված պատմա-ինքնակենսագրական վեպի առաջին հատորը՝ «Այրվող հորիզոնը» անակնկալ չէր իր թեմատիկ առումով։ Հեղինակն իր հարուստ կենսափորձը խտացնելով հիմնական հերոսի՝ Լևոն Լուսինյանի կերպարի մեջ, պատկերել է հասարակական-քաղաքական այն տեղաշարժերը, որոնք իրար էին հաջորդում դարասկզբի Ռուսաստանում։

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից Արազին ձեռնամուխ եղավ «Իսրայել Օրի» խորագրով պատմական վեպ գրելու պատասխանատու գործին։ 18-րդ դարավերջի հայկական ազատագրական շարժման այս նշանավոր ներկայացուցիչը առանձնահատուկ տեղ ունի մեր պատմագրության մեջ։ Իսրայել Օրին առաջին և թերևս միակն էր, որ եվրոպական մեծ ու փոքր տերությունների խարդավանքներից հիասթափված՝ կարողացավ հասկանալ, որ հայ ժողովրդին փրկող ու զորավիգ կարող է լինել միայն «Ռուսիո մեծափառ կայսրությունը» և իր եռանդուն ջանքերն ուղղեց երկու երկրների հարաբերությունների բարելավման ու ամրապնդման գործին։ Արազին կարողացել է, ընդհանուր առմամբ, հաջողությամբ վերարտադրել այդ գործունեությունը, գեղարվեստորեն ստեղծել Իսրայել Օրու և նրա համագործակիցներ (Մինաս վարդապետ, Մելիք Շահնազար և այլն) համոզիչ կերպարները։ Այս էր պատճառը, որ պատմավեպը հրատարակվելուն պես արժանացավ ընթերցող և գիտական հասարակայնության ջերմ ուշադրությանը։

Արազու ստեղծագործություններից շատերը թարգմանվել են Սովետական Միության ժողովուրդների լեզուներով (ռուսերեն, վրացերեն, ուկրաիներեն, ադրբեջաներեն), ինչպես նաև չեխերեն ու լեհերեն, և միաձայն արժանացել են օտարազգի ընթերցողների համակրանքին։ Իր մատուցած անձնվեր ծառայությունների համար նա պարգևատրվել է «Պատվո նշան», «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշաններով, իսկ 1955 թ.՝ Լենինի շքանշանով։

Չնայած առաջացած տարիքին՝ 85-ամյա հասակին, Արազին շարունակում է իր գրական-հասարակական անխոնջ գործունեությունը ի փառս իր ժողովրդի և նրա հոգևոր մշակույթի։

Սովետական Հայաստան, 1963, № 68, մարտի 21